ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻՑ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼԻ ԴԱՐՁՆԵՆՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես ավետարանիչների տոնը այս տարի հոկտեմբերի 12-ին առաձնակի շուքով կատարվեց Գուգարաց թեմում: Հավարտ Ս. Պատարագի Վանաձորի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու սրահում տեղի ունեցավ հանդիպում քաղաքի մի քանի դպրոցների բարձր դասարանների աշակերտների, ուսանողների և ուսուցիչների հետ, ուր կազմակերպվեց Սուրբ Գրքի ուսուցում՝ «Աստվածաշունչը և մենք» թեմայով: Բանախոսությամբ հանդես եկավ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վահան քահանա Ազարյանը՝ ներկայացնելով Աստվածաշունչ մատյանի բովանդակությունը, խոսելով Գրքերի Գրքի կազմավորման անցած ճանապարհի և կարևորության մասին: Տեր Հորն ուղղված հարցերից հետո շարունակվեց բանախոսությունը՝ «Աստվածաշունչը և հայոց մշակույթը» թեմայով, ուր բանախոսը հատկապես կարևորեց հայ մշակույթի վրա Աստվածաշունչ մատյանի թողած մեծ ազդեցությունը:

Նմանատիպ հանդիպում-դասախոսություններ հոգևոր հովիվների կողմից տեղի ունեցան նաև թեմի գործող եկեղեցիներում, մասնավորապես՝ Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր քաղաքների եկեղեցիներում:

Հատկանշականն այն է, որ այս հանդիպումները դարձան շարունակական, և երիտասարդներն ու պատանիներն արդեն ամիսը երկու անգամ հանդիպում են իրենց քահանաների հետ՝ ստանալով իրենց հարցերի պատասխանները:

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Նպատակ ունենալով ամրապնդել Եկեղեցի-հասարակական կազմակերպություններ-պետություն կապը՝ ի շահ հասարակության և կարոտյալ խավի՝ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհությամբ և «Բոլոր սար» ՀԿ նախաձեռնությամբ հոկտեմբերի 24-ին Առաջնորդարանի սրահում տեղի ունեցավ «Վանաձոր համայնքի սոցիալական հիմնախնդիրները» թեմայով կլոր սեղան-քննարկում Վանաձոր համայնքի հասարակական կազմակերպությունների, հոգևոր և պետական այրերի մասնակցությամբ:

Վանաձորում գործող տասնյակից ավելի հասարակական կազմակերպությունները շատ անգամներ են միասին հավաքվել կլոր սեղանի շուրջ, քննարկել ու վեր հանել համայնքի հիմնախնդիրները և փորձել լուծում տալ դրանց: Սակայն հոգևոր և պետական կառույցների գործուն մասնակցությամբ արդեն կոնկրետ քայլ ու որպես արդյունք մի քայլ առաջ է այս հանդիպումը: Դեռևս 2005 թ. ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի կողմից Վանաձորի հասարակական կազմակերպությունների համար «Քաղաքացիական հասարակության